

## ՍՈՒՐ ԿՈՒՐԵՎԵՏԵՎԵՊ

Տառնըորս տարեկան Վարթիթեռը, կարմիր այտերով, աղուոր ու առողջ աղջնակ մըն էր: Իրիկուն մը տօնական ընթրիքի համար, իր մայրը բաղարջ պատրաստած էր, ի՞նչ ուրախութիւն: Յաջորդ առաւոտ, Վարթիթեռը զպրոց մեկնեցաւ, բայց ոչ լաւ տրամադրութեամբ: Դասարանին մէջ ևս, գասերու պահուն, անուշազիր էր Յանեկարդ այլևս չկարողացաւ տորալ և ճիչ մը արձակեց: որովայնին մէջ, աջ կողմը, զանակի հարուածի մը պէս ցաւ մը միտուեցաւ, և մինչ ուսուցչունին օդուութեան կը փութար, Վարթիթեռը սկսաւ փըսիել: Ուսուցչունին անմիջապէս զայն տուն փոխադրել առուած Մայրը իր աղջիկը տեսնելով այլայեցաւ, բայց շուտով յիշեց նախորդ իրիկուան քաղաքըները և ինք որ յաճախ տեսած էր այդ անհանգստութիւնները, պատկեցուց Վարթիթեռը և անոր փորին զրայ դրաւ բաւական տաք լափա մը և ահաւասիկ ցաւը սկսաւ մեղմանալ: Յետոյ դրաւ ջերմաչափը և տեսնելով որ մարմնոյ տաքութիւնը 37,5 աստիճանը չանցնիր, հանգստացաւ և աղջկան հետ միասին լաւ գիշեր մը անցուցին:

Յաջորդ առուած, Վարթիթեռը կանուխ արթնցաւ այլես ցաւ չը զգար և ոչ իսկ սիրտ խառնուք, այլ միայն ստամոքսի նեղութիւն մը: Մայրը լաւ լուծողական մը տուաւ: Մէկ ժամ յետոյ, ցաւերը վերսկսան աւելի սաստիկ քան նախորդ օրը: Այս անգամ լափան օգուաւ չըրաւ, իսկ լուծողականը քիչ աղդեց: Խեղճ փոքրիկին գէմքը զունաթափ եղաւ, մէզը բռնուեցաւ: Ծարահատ բժիշկ մը կանչեցին: սա զտաւ որ ամբողջ որովայնը բորբոքած էր (*peritonile aigue*), և անմիջապէս զործողութեան ենթարկել տուաւ: Ամրող որովայնը թարախով լեցուած էր և կուրաղին ցայց կուտար պղտիկ ծակ մը, ուրիէ մանրէները մաեր էին որովայնին մէջ և յառաջացուցեր էին ընդհանուր մահացու բորբոքում: Յաջորդ օրը Վարթիթեռին վիճակը աւելի ծանրացած էր: իր գէմքին զեղեցիկ զոյները սկսան անհետանալ, շնչառութիւնը գծուարացաւ, ու մահը սկսաւ թեւածիլ անոր վրայ: Դժբախտ մայրը սնարին քովն էր և կ'արտասուէր, ուրովհետեւ հասկցած էր թէ իր աղջիկը կորսուած էր, և ինքնիրեն հարց կուտար թէ ինչո՞ւ համար բժիշկները չկարողացան փրկել իր սիրասունը: Անոր համար որ Վարթիթեռը սուր կուրաղետապ (բէռ պաղարսըգ, *appendicite*) ունէր և մայրը անխոհեմաբար լուծողական տուած էր...:

Եղուարդ ութ տարեկան տղեկ մըն է, բայց քիչ մը անդօր, այն տղոցմէ, որ շատ արագ աճում ունեցած էն Քիչ անդամ կը հիւ անդանայ, բայց շատ զօրեղ չէ: Առոր համար ալ իր ծնողքը զայն կանոնաւորաբար կ'ուղարկեն քաղաքէ դուրս օգասուն վայրեր, մաքուր և թարմ օդ առնելու համար: Օր մը Եղուարդ կը խաղար և ուրախ, զուարթ կը ցատկուեր: Յանկարծ կանդ առաւ, թեթև ցաւ մը՝ խայթուածքի նման, մտաւ աջ աճուկէն քիչ մը վերո Բայց շուտով անցաւ: Մինչեւ իրիկուն երկու երեք անդամ կրկնուեցաւ նոյն ցաւը:

Բայց Եղուարդ  
յոգնած ու տիուր  
էր, անօթի ալ  
չէր, այնպէս որ  
միայն քիչ մը  
ապուր խմնեց և  
ննջասենեակ  
գնաց: Հանուե-  
լու ատեն սիրտը  
խառնուեցաւ և  
ապուրը փսխեց:  
Մայրը մտահոգ,  
անմիջապէս տան  
քիշկը կանչեց,  
որտեսաւ տղուն  
յոգնած դէմքը,  
հաստատեց 39 աս-  
տիճան ջերմու-  
թիւն ունենալը



Որովայնին մէջ գտնուող զլսաւոր գարճարանները՝ ընա-  
կանոն վիճակի մէջ երիկամունքը ազ եւ ձախ կողմը; անտեսա-  
նելին, ծածկուած ըլլալով աղիքներով:

Քիւն ունենալը  
որովայնին աջ կողմի ցաւն ու այդ շրջանին դիմադրութիւնը շօշա-  
փման ատեն և յարտարարեց որ տպան սուր կուրազետապէ բանուած  
էր: Անմիջապէս, ծնողքին հաւանութեամբ, դարձանատուն մը փսխադ-  
րելտուաւ, ուր գիշերուան ժամը 10ին գործողութեան հնթարկուեցաւ,  
ճիշտ ժամանակին: Հանուած կուրազին մեծ էր և երկայն: աղան  
հօրը ցոյց տուաւ պատիկ խճաքար մը, որ մաշած էր կուրացիին  
պատը եթէ գործողութիւնը քանի մը ժամ ուշանար, հաւանարար  
կուրազին պիտի ծակէր, աղիքին անմաքրութիւններն ու մանրէ-  
ները պիտի լեցուէին որովայնին մէջ և պատճառ պիտի ըլլային  
աղեփառարորքի (peritonite): Յաջորդ ապաւոտ Եղուարդ, թէւ տակա-  
ւին քիչ մը ցաւ կը զգար աջ կողմը և քիչ մըն ալ սիրտ խառնուաք  
ունէր, արդիւնք քլօրօֆօր: Ին, բայց և այնպէս իր ճերմուշ անկողնին  
մէջ կը ժամանէր: Մայրն ալ երջանիլ էր որ զաւակը գրիուած էր:  
ինչո՞ւ համար Եղուարդ բուժուեցաւ

Արտօնութեան լուծողական շառակի իրավունք

Արտիկանու հերչու առնենին դործողութեան և նթարից եղաւ.

Աւրինն այս երկու պարագաներէն հանձնք որոշ ու պարզ և լրակացութիւն մը եթէ տղայ մը, նաև չափահաս մը, փորին մէջ, մասնաւորաբար այդ աճուկէն քիչ վերօք, ցաւ մը ունի և սիրող կը խառնուի կամ կը փախէ, ամէն բանէ առաջ պէտք է զգուշանալ լուծաղական տարի։ Մարդ անմիջապէս կը խորհի թէ եղածը անմարտութեան հետեւանք է, այդպէս ալ խորհեցաւ դժբախտ Վարթիթեոին մայրը, իրապէս կրնայ պարզ անմարտութիւն ըլլա՛, բայց կրնայ նաև սուր կուրազեսապ մը ըլլալ, որուն ախտածանչութիւնը յահախ թժիշկէ մը միայն կրնայ ընել Սակայն ի՞նչ կարելի է ընել մինչեւ թժիշկին գալը։ Պէտք է վաստարագոյնը խորհիլ, ենթազրել որ կուրազեսապ է, և լուծաղական չտալ, որովհետեւ տրուած լուծաղականը աղիքներու պրկում կը յառաջացնէ, և կը ծանրացնէ ազետապը ու առաւել կամ նուազ բարգութեանց պատճառ կը դառնայ։

Աւրեմն նախ՝ լուծողական շտալ ու յետոյ՝ սառ կամ պազ լաթ մը գնել փարփն վրաց և սպասել բժիշկին, որ ստուգելով հիւանդութիւնը, կամ անհրաժեշտ գեղերը կուտայ անմարտողութեան համար և կամ եթէ կուրաղեատապ է, գործողութիւն կը յանձնարարէ անմիջապէս՝ եթէ ժամանակը անցած չէ, և կամ քանի մը շարաթ յետոյ, նույան անցնելէ, հիւանդութիւնը «պազել» ետք:

(Յատովա) ԲԺ. ԱՄՄ. ՍԻՐՈՒԻՆԵԱՆ

**ՄԵՐ ԸՆԴՈՒՆՈՒՅԹՆԵՐԻ աման սաժանու-**

դագրութիւնը՝ սկսած բլլալով Յունուար 1928ին, կը լրանայ ներկայ թիւով։ Այդպիսիներէն կը խնդրենք որ բարի բլլան փութացնել իրենց բաժննեղինը 1929 տարւոյ համար։

Մեր սովորութեան համաձայն, այս խնդրանքը չպիտի կրկնենք եւ «Բուժանք»ի առաջումը պիտի գագրեցնենք անխստիր բոլոր անոնց օրոնց բաժնեգինը ստացած չենք մինչև Յունուար 15 (Ֆբրանսա) կամ 31 (արտասահման):

Որպինեան վստահ ենք թէ անոնք որ «Բուժանք»ով կը հետաքրքրութին եւ կը գնահատեն զայն, ապացոյցը պիտի տանիքենց գնահատութեան՝ զէթ ժամանակին վճարելով նոր շրջանի բաժնեկինութիւն:

Եւ արգե՞ն այդպիսիներուն համար է որ կը տանինք «Բռնացանք»ի հրատարակութեան ծանր բեռ: